

ժամանեացեն ազօթս առ Աստուած մատուցանեմք, ամէն :

Ի թղթոյ անտի ձերմէ ի վերայ հասանեմք, եթէ երեք իրք մանաւանդ ի մէջ պահանջին . Մի՛ զի ի սոսկալի անդր ի սուրբ զոհն ջուր ի ներքս խառնիցեմք . երկրորդ զի յերզն երեքսրեան զՈր խաչեցարն մի յաւելուցումք . եւ երրորդ զի ժողովոյն Քաղկեդոնի զձեռնազիր մեր տացուք : Յայս երիս իրս փակեալ կայ կրճիմն ատելութեան եւ անմիարանութեան եւ հակառակութեան ի մէջ քրիստոնէից : Արդ ի հարց եւ ի փորձ արկեալ քննեսցուք մտադիւր յօժարութեամբ զսկիզբնն նոցին խաղաղութեամբ եւ սիրովն Քրիստոսի , որում արժանի արար զմեզ զհաւատացեալս անուան իւրոյ Յիսուս Քրիստոս : Մարթին այսոքիկ ոտնկոխ գտանել առ Արեւելեայս , լիցի եւ ժամանակն նպաստամատոյց առ ի գլուխ հանել զսուրբ միութիւնն , եթէ ամենեքին վառեալք ի սէրն Քրիստոսի առնուցուն յանձն հնազանդել եւ արկանել զանձինս հպատակ մտօք ընդ միով գլխովն : Յայնժամ իլեացի ի բաց եւ արմատն ամենայն դառնութեան , պատճառք ամենայն չարեաց . եւ Եկեղեցի ի մի փարախ անդր նորոգեսցի ընդ միով հովուաւ , ըստ օրինակի երկնաւորն դրախտի բարոք կարգեալ եւ յարդարեալ : Ընդ այս միութիւն ցանկամք մտադիւր . եւ եթէ հասանիցէ այսմ այսպէս լինել , չգուցէ այնուհետեւ արգել ի միջի , առ ի զհրամանաց ձերոց զհետ երթալոյ : Այլ այժմիկ շատ իսկ եւ